

«ՀԱՍՏԱՏՈՒՄ ԵՄ»



Երևանի պետական համալսարանի ռեկտոր,
պատմական գիտությունների դոկտոր

Հ.Վ. Հովհաննիսյան

« 06 » Փետրվար 2026թ.

ԿԱՐԾԻՔ

ԱՌԱՋԱՏԱՐ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ

Ներսես Նորայրի Ներսիսյանի Ը.00.03' - «Ֆինանսներ, հաշվապահական հաշվառում» մասնագիտությամբ տնտեսագիտության թեկնածուի գիտական աստիճանի հայցման համար ներկայացված «Գյուղատնտեսության ռիսկերի ապահովագրության պետական աջակցության համակարգի զարգացման ուղիները (ՀՀ օրինակով)» թեմայով ատենախոսության վերաբերյալ

Ատենախոսությունը քննարկվել է ԵՊՀ Տնտեսագիտության և կառավարման ֆակուլտետի Ֆինանսահաշվային ամբիոնի 2026 թվականի հունվարի 30-ին կայացած նիստում: Նիստին ներկա էին ֆինանսահաշվային ամբիոնի վարիչի ժամանակավոր պաշտոնակատար տ.գ.թ., դոցենտ Գ.Է. Սահակյանը (նախագահող), տ.գ.թ., դոցենտ Թ.Ս. Հովակիմյանը, տ.գ.թ., դոցենտ Գ.Մ. Մնացականյանը, տ.գ.թ., ասիստենտ Հ.Հ. Դովլաթյանը, տ.գ.թ., դոցենտ Գ.Ա. Սիրոյանը, տ.գ.թ., դոցենտ Գ.Ֆ. Կիրակոսյանը, տ.գ.թ., դոցենտ Ա.Վ. Քառյանը, տ.գ.թ., ասիստենտ Հ.Հ. Դովլաթյանը, տ.գ.թ., ասիստենտ Լ.Հ. Կարապետյանը, տ.գ.թ., դասախոս Բ.Հ. Մովսիսյանը, տ.գ.թ., դասախոս Հ.Ա. Մակարյանը, նիստի քարտուղար Լ.Մ. Ասրյանը:

Ատենախոսության թեմայի արդիականությունը

Գյուղատնտեսությունը թե՛ Հայաստանի Հանրապետությունում, թե՛ միջազգային մակարդակում հանդիսանում է տնտեսության ռազմավարական կարևորություն ունեցող ոլորտ, որի արդյունավետ գործունեությունից էականորեն կախված է պարենային անվտանգության ապահովումը և կայուն զարգացման գործընթացը: Միաժամանակ, ոլորտը բնութագրվում է բարձր ռիսկայնությամբ՝ պայմանավորված բնական, կենսաբանական և շուկայական մի շարք գործոններով, ինչը գյուղատնտեսական

գործունեությունը դարձնում է առավել խոցելի այլ տնտեսական ոլորտների համեմատությամբ:

Այս համատեքստում գյուղատնտեսական ռիսկերի ապահովագրությունը դիտարկվում է որպես ռիսկերի կառավարման արդյունավետ մեխանիզմ, որը հնարավորություն է տալիս մեղմելու անկանխատեսելի իրադարձությունների բացասական ազդեցությունը և ապահովելու ֆինանսական կայունություն ֆերմերների համար: Ապահովագրական գործիքների կիրառումը նպաստում է արտադրողականության և շահութաբերության բարձրացմանը, ինչպես նաև գյուղատնտեսական գործունեության ընդհանուր արդյունավետության բարելավմանը:

ՀՀ պայմաններում գյուղատնտեսական ռիսկերի ապահովագրության համակարգի ձևավորումն ու զարգացումը սերտորեն կապված է պետական աջակցության անհրաժեշտության հետ: Առանց պետական մասնակցության ոլորտում ապահովագրական մեխանիզմների լայն կիրառումը գործնականում սահմանափակ է, ինչը պայմանավորում է տվյալ խնդրի ուսումնասիրման կարևորությունը և ներկայացված ատենախոսության հետազոտական ուղղվածության արդիականությունը:

Հետազոտության նպատակներն ու խնդիրները

Ներկայացված ատենախոսությունում որպես նպատակ ձևակերպված է՝ բացահայտել և վերլուծել Հայաստանի Հանրապետությունում գյուղատնտեսության ռիսկերի ապահովագրության արդի վիճակը, և զարգացման մարտահրավերները՝ ներկայացնելով պետական աջակցության համակարգի կատարելագործման արդյունավետ ուղիներ:

Ատենախոսության սահմանված նպատակին հասնելու համար հեղինակը առանձնացրել է հետևյալ հիմնախնդիրները.

- ✓ ուսումնասիրել գյուղատնտեսության ոլորտի առկա ռիսկերը, տեսակները և կառավարման հնարավոր տարբերակները,
- ✓ վերլուծել գյուղատնտեսության ապահովագրության միջազգային փորձը և ոլորտում կիրառված գործիքակազմերը,
- ✓ հետազոտել Հայաստանի Հանրապետությունում գյուղատնտեսության ռիսկերի ապահովագրության իրավական դաշտը, ոլորտում առկա խնդիրները,
- ✓ ուսումնասիրել ՀՀ գյուղատնտեսության ապահովագրության հնարավոր կոռուպցիոն ռիսկերի դրսևորումները և հակակոռուպցիոն քաղաքականությունը,
- ✓ բացահայտել ՀՀ գյուղատնտեսության ոլորտում ռիսկերի ապահովագրության պետական աջակցության համակարգի բնականոն գործունեությունից հնարավոր շեղումները, առանձնահատկությունները,
- ✓ բացահայտել կենդանիների, հատկապես մեղվաբուծության ապահովագրության զարգացման հնարավորությունները Հայաստանի Հանրապետությունում,

- ✓ առանձնացնել ՀՀ գյուղատնտեսության ռիսկերի ապահովագրության համակարգի կատարելագործման և պետական աջակցության զարգացման հնարավոր ուղիները:

Հետազոտության օբյեկտը և առարկան

Հետազոտության օբյեկտը ՀՀ գյուղատնտեսության ռիսկերի ապահովագրության ոլորտն է, իսկ հետազոտության առարկան՝ ՀՀ գյուղատնտեսության ռիսկերի ապահովագրության պետական աջակցության համակարգի զարգացումը, ինչպես նաև կառավարման հիմնախնդիրները և արդյունավետության բարձրացման ուղիների մշակումը:

Հիմնական գիտական արդյունքները և հետազոտության նորույթը

Առենախոսության ուսումնասիրությունների և վերլուծությունների արդյունքում առանձնացվել են հետևյալ գիտական նորույթները.

- ✓ սեզոնային ինդեքսների և վիճակագրական ցուցանիշների հիման վրա կատարվել է գյուղատնտեսության ապահովագրության պիլոտային ծրագրի արդյունավետության գնահատում, որի շրջանակներում կոռելյացիոն վերլուծության հիման վրա գնահատվել է ամենապահանջված պրոդուկտների՝ խաղողի և ծիրանի գծով ապահովագրության փոփոխության ազդեցությունը պիլոտային ծրագրի արդյունավետության վրա,

- ✓ անասնաբուծության ապահովագրության մեկնարկային կետ առանձնացնելով ոլորտում գործող սուբսիդավորման նախագծերը, գնահատվել է անասնաբուծության ոլորտում նորարարական տեխնոլոգիաների, այդ թվում՝ խելացի անասնաշենքերի ներդրման արդյունավետությունը և նպաստումն ոլորտի զարգացման ու ապահովագրական ծրագրերի իրականացման գործընթացներում,

- ✓ որպես ելակետ ընդունելով մեղվաբուծության ոլորտում մեղրի մնացորդի տվյալները, մշակվել է մեղվաբուծության ապահովագրության ներդրման կառուցակարգ, իսկ կլաստերային վերլուծության միջոցով առանձնացվել են «առավել մոտ» մարզերը՝ օպտիմալ ռեսուրսային ծախսերի ու արդյունավետ ապահովագրության ծրագիր իրականացնելու նպատակով,

- ✓ լոգարիթմական մոդելի միջոցով գնահատվել է առանց պետական աջակցության ֆերմերների՝ մեղվաբուծության ոլորտում ապահովագրությանը վճարելու պատրաստակամությունը և մշակվել է ապահովագրական մոդելի կիրառության մեթոդաբանություն, որն ապացուցում է ոլորտի բարձր ռիսկայնությունը և ցույց է տալիս, որ առանց պետական սուբսիդավորման ապահովագրավճարների արդյունավետ համակարգի ներդրումը գրեթե անհնար է:

Հետազոտության ծավալը և կառուցվածքը

Ատենախոսությունը բաղկացած է ներածությունից, երեք գլխից, եզրակացություններից, օգտագործված գրականության ցանկից և հավելվածներից: Ատենախոսությունը շարադրված է 180 էջի վրա՝ առանց հավելվածների:

Ատենախոսության հիմնական բովանդակությունը

Ներածության մեջ հիմնավորվում է ատենախոսության թեմայի արդիականությունը, ձևակերպվում են հետազոտության նպատակն ու խնդիրները, սահմանվում են աշխատանքի արդյունքների գիտական նորույթը և գործնական նշանակությունը, ինչպես նաև ներկայացվում է հետազոտության արդյունքների գործնական արժեքավորությունը:

Ատենախոսության առաջին՝ **«Գյուղատնտեսության ոլսկերի ապահովագրության ընդհանուր բնութագիրը և հայեցակարգերը»** գլխում բացահայտվում է գյուղատնտեսության ոլսկերի տեսական հիմքը՝ դրանց տեսակների, բնույթի և առաջացման պատճառների վերլուծությամբ: Համակողմանիորեն անդրադարձ է կատարվել միջազգային փորձին՝ ներկայացնելով գյուղատնտեսական ապահովագրության մոդելները, կառուցվածքն ու գործիքակազմը տարբեր երկրների օրինակներով: Այս բաժնում առանձնահատուկ ուշադրություն է դարձվել պետական աջակցության դերակատարությանը՝ ցույց տալով, որ առանց պետական միջամտության ապահովագրական համակարգն ունի զարգացման դժվարություններ և խոչընդոտներ: Գլուխը եզրափակվում է Հայաստանի Հանրապետությունում գործող պետական աջակցության համակարգի վերլուծությամբ՝ ներկայացնելով դրա կառուցվածքային առանձնահատկությունները, կիրառական խնդիրներն ու զարգացման հնարավոր ուղղությունները:

Ատենախոսության երկրորդ՝ **«Գյուղատնտեսության ոլսկերի ապահովագրության կարգավորումը և հիմնախնդիրները Հայաստանի Հանրապետությունում»** գլխում կատարվել է ոլորտի կարգավորման կառուցվածքի և օրենսդրական դաշտի համապարփակ ուսումնասիրություն: Վերլուծվել է ՀՀ-ում գործող ապահովագրական քաղաքականության հիմնական ուղղությունները, ուսումնասիրել ոլորտի կառավարման գործիքները և առկա թերությունները: Ներկայացվել են նաև կոռուպցիոն ռիսկերը գյուղատնտեսության ապահովագրության ոլորտում՝ դիտարկելով դրանց հնարավոր ազդեցությունը համակարգի արդյունավետության և պետական սուբսիդավորման գործընթացների վրա:

Ատենախոսության երրորդ՝ **«ՀՀ-ում ոլսկերի ապահովագրության կառավարման հիմնախնդիրները և զարգացման հիմնական ուղիները»** գլխում ներկայացվել են գյուղատնտեսության ապահովագրության համակարգի կատարելագործման ուղղություններն ու գործնական լուծումները: Առանձնացվել է կենդանիների և մեղվաբուծության ապահովագրության զարգացման հնարավոր տարբերակներ՝

առաջարկելով դրանց ներդրման մոդելներ և ներդրումային հաշվարկներ: Մասնավորապես՝ մշակվել է մեղվաբուծության ապահովագրության կառուցակարգ, որն արտացոլում է կլաստերային վերլուծության արդյունքները, և գնահատվել է անասնաբուծության ոլորտում «խելացի անասնաշենքերի» ներդրման արդյունավետությունը՝ ապահովագրության զարգացման խթանման տեսանկյունից: Բացի այդ, ներկայացվել են գյուղատնտեսական ապահովագրության կատարելագործման ռազմավարական մոտեցումներ, որոնք ուղղված են համակարգի ֆինանսական կայունության և ֆերմերների մասնակցության խթանմանը: Սեզոնային ինդեքսների և վիճակագրական ցուցանիշների հիման վրա կատարվել է գյուղատնտեսության ապահովագրության պիլոտային ծրագրի արդյունավետության գնահատում:

Աշխատանքի արդյունքների հիման վրա ներկայացվում են համապատասխան եզրակացություններ և առաջարկություններ:

Դիտողություններ ալտենախոսության վերաբերյալ

1. Ապահովագրական ռիսկի հաշվարկման համար ալտենախոսության 3.1 ենթագլխում ներկայացված՝ $ART = ((Dt / Ht) \times \alpha + \beta / (1 + St)) * 1000$ (օրինակներով $\alpha = 0.7$, $\beta = 0.3$) բանաձևն անասնաապահության ոլորտում կիրառելի չէ: Այն ունի որոշակի տրամաբանական հիմք, սակայն չի հիմնավորվում ինդեքսային/ավանդական անասնաապահական ապահովագրության իրական կանոնակարգերով, ապահովագրական ընկերությունների մեթոդաբանություններով կամ միջազգային պրակտիկայով:
2. Աշխատանքի 3.1 ենթագլխում (էջ 119) հեղինակը նշում է՝ «Հաշվի առնելով գյուղատնտեսության ոլորտում գործող սուբսիդիոն ծրագրերի առկայությունը, հնարավոր փոխկապակցվածությունն ապահովագրության պիլոտային ծրագրի հետ հնարավոր կլինի ձևավորել գյուղատնտեսության ոլորտի անասնաբուծության ապահովագրական ծածկույթի ստեղծման անհրաժեշտ կառուցակարգեր»: Այս կապակցությամբ հարկ ենք համարում նշել, որ ապահովագրական ծածկույթ չեն ստեղծում: Ապահովագրողը այն կարող է հաշվարկել ու սահմանել բարձր կամ ցածր՝ ըստ գործոնների:
3. Ալտենախոսությունում որպես 3-րդ նորույթ նշված է՝ «որպես ելակետ ընդունելով մեղվաբուծության ոլորտում մեղրի մնացորդի տվյալները, մշակվել է մեղվաբուծության ապահովագրության ներդրման կառուցակարգ, իսկ կլաստերային վերլուծության միջոցով առանձնացվել են «առավել մոտ» մարզերը՝ օպտիմալ ռեսուրսային ծախսերի ու արդյունավետ ապահովագրության ծրագիր իրականացնելու նպատակով» Այս առումով հարկ ենք համարում նշել, որ աշխատանքում ներկայացված չեն այն կոնկրետ չափանիշները (փոփոխականները), որոնցով համեմատվել են տարածաշրջանները: Մեղվաբուծության համար որպես այդպիսիք կարող են դիտարկվել մեղվաընտանիքների

քանակը, մեղրի արտադրության ծավալը, կլիմայական պարամետրերը (ջերմաստիճան, տեղումներ), բուսական աշխարհը (սննդի մատակարարում) կամ մեղուների մահացության վիճակագրությունը: Կարծում ենք, որ առանց նշված չափանիշների ներկայացման դժվար է գնահատել ստացված զույգերի հիմնավորվածությունը:

4. Ատենախոսությունում հեղինակը լոգարիթմական մոդելի միջոցով գնահատել է առանց պետական աջակցության ֆերմերների՝ մեղվաբուծության ոլորտում ապահովագրությանը վճարելու պատրաստակամությունը և մշակել է ապահովագրական մոդելի կիրառության մեթոդաբանություն: Կարծում ենք, այն Հայաստանում (կամ որևէ այլ երկրում) մեղվաբուծության ոլորտում ապահովագրավճարների հաշվարկման տեսանկյունից խիստ վիճահարույց է, չնայած տեսականորեն դրա հիմնավորվածությանը: Այն առավելապես տեսական հետազոտական մոդել է, որը հիմնված է դասական սպասվող օգտակարության տեսության վրա:
5. Ատենախոսությունում իրականացված վերլուծությունների ընթացքում հեղինակն առավելապես կենտրոնացել է գյուղատնտեսության ոլորտի ապահովագրության հիմնախնդիրների և դրանց լուծումների ուսումնասիրությանը, ոչ բավարար խորությամբ անդրաադառնալով դրա պետական աջակցության համակարգի զարգացմամբ պայմանավորված ռեսուրսային ապահովվածության հնարավորությունների գնահատմանը: Կարծում ենք, վերջինիս ուղղությամբ վերլուծությունները պետք է կրեին առավել խորը բնույթ, ինչն, ակնհայտորեն, կբարձրացներ կատարված առաջարկությունների գործնական կիրառման իրատեսականությունը:
6. Գյուղատնտեսության ոլորտի ռիսկերի ապահովագրության հետ կապված հարցերի շրջանակում հեղինակը հիմնականում քննարկել է կենդանիների և մեղվաբուծության ապահովագրության զարգացման հեռանկարները, միաժամանակ, չներկայացնելով նշված ճյուղերի ընտրության և դրանց ուսումնասիրության անհրաժեշտության հիմնավորումները: Խնդիրը կայանում է նրանում, որ գյուղատնտեսության ոլորտում գործունեության տարբեր տեսակների մասով ռիսկերը որոշակիերեն տարբերվում են, ինչը, բնականաբար, իր համապատասխան անդրադարձն է ունենում դրանց ապահովագրության վրա: Նշված հանգամանքը հեղինակի կողմից պետք է արժանանար առավել խորը վերլուծության:

ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

Ներսես Նորայրի Ներսիսյանի «Գյուղատնտեսության ռիսկերի ապահովագրության պետական աջակցության համակարգի զարգացման ուղիները (ՀՀ օրինակով)» թեմայով ատենախոսությունն ինքնուրույն, գիտական արժեք ունեցող և ամփոփ հետազոտություն է, որով ստացված արդյունքները կարող են նպաստել ՀՀ-ում գյուղատնտեսության ոլորտի առջև ծառացած հիմնախնդիրների լուծմանը:

Ատենախոսության հիմնական արդյունքներն արտացոլված են հեղինակի տպագրված 9 գիտական հոդվածներում: Հոդվածները ներկայացված են սեղմագրում:

Սեղմագիրը կազմված է ՀՀ ԲԿԳԿ-ի պահանջներով և համապատասխանում է ատենախոսության բովանդակությանը, արտացոլում է դրա հիմնական դրույթներն ու արդյունքները:

Հետևաբար, «Գյուղատնտեսության ռիսկերի ապահովագրության պետական աջակցության համակարգի զարգացման ուղիները (ՀՀ օրինակով)» թեմայով պաշտպանության ներկայացված ատենախոսությունը բավարարում է Ը.00.03 - «Ֆինանսներ, հաշվապահական հաշվառում» մասնագիտությամբ թեկնածուական ատենախոսություններին «Հայաստանի Հանրապետությունում գիտական աստիճանաշնորհման» 6-րդ և 7-րդ կետերի և ՀՀ ԲԿԳԿ-ի կողմից թեկնածուական ատենախոսություններին ներկայացվող այլ պահանջներին, իսկ նրա հեղինակը՝ **Ներսես Նորայրի Ներսիսյանը** արժանի է տնտեսագիտության թեկնածուի գիտական աստիճանի շնորհմանը:

Առաջատար կազմակերպության կարծիքը քննարկվել է Երևանի պետական համալսարանի տնտեսագիտության և կառավարման ֆակուլտետի Ֆինանսահաշվային ամբիոնի 30.01.2026 թ.-ին կայացած նիստում (արձանագրություն թիվ 5):

**ԵՊՀ տնտեսագիտության և կառավարման
Ֆակուլտետի Ֆինանսահաշվային
ամբիոնի դոցենտ, տ.գ.թ.՝**

Ա.Վ.Քառյան

**ԵՊՀ տնտեսագիտության և կառավարման
Ֆակուլտետի Ֆինանսահաշվային
ամբիոնի դոցենտ, տ.գ.թ.՝**

Գ.Մ.Մնացականյան

**ԵՊՀ տնտեսագիտության և կառավարման
Ֆակուլտետի Ֆինանսահաշվային ամբիոնի
վարիչի պաշտոնակատար, տ.գ.թ.՝**

Գ.Է.Սահակյան

**Գ.Է.Սահակյանի, Գ.Մ.Մնացականյանի և Ա.Վ.Քառյանի ստորագրությունները
հաստատում եմ՝**

**ԵՊՀ գիտական քարտուղար
բ.գ.թ., դոցենտ՝**

Մ. Հ. Հովհաննիսյան



06.02.26թ.